ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Աջակցություն առողջապահական համակարգերի դիմակայունության ամրապնդմանը Արևելյան գործընկերության տարածաշրջանում – Բաղադրիչներ 2 և 3

Իրականացման ժամանակահատված: 01.10.2024 - 31.03.2027

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 4 900 000

Ընդհանուր բյուջե: € 5 313 620

Իրականացնող կազմակերպություն(ներ):

World Health Organization (WHO)

Նախագծի նկարագրություն

Ծրագրի նպատակն է ամրապնդել Արևելյան գործընկերության երկրների կարողությունները առողջապահական արտակարգ իրավիճակներին արձագանքելու և առողջապահության ոլորտի հիմնական մարտահրավերներին արդյունավետ կերպով դիմակայելու համար: Այն կկենտրոնանա երկու հատուկ նպատակների վրա՝ 1) առողջապահական աշխատուժի կարողությունների և դիմակայունության ամրապնդում, և 2) հոգեկան առողջության համակարգերի ուժեղացում: Մասնավորապես, ծրագիրը կաջակցի առողջապահական աշխատողների ներգրավման և պահպանմանն ուղղված քաղաքականությունների բարելավմանը, բուժքույրական և բժշկական կրթության համակարգերի զարգացմանը, ինչպես նաև առողջապահական աշխատուժի ազգային կառավարման և պլանավորման մեխանիզմների ուժեղացմանը: Միաժամանակ, ծրագիրը կնպաստի ապացույցների վրա հիմնված հոգեկան առողջության քաղաքականությունների մշակմանն ու առաջխաղացմանը, համապատասխան օրենսդրական շրջանակների բարեփոխմանը և առողջապահության ու խնամքի ոլորտի մասնագետների կարողությունների զարգացմանը՝ բարձրորակ հոգեկան առողջության ծառայությունների հասանելիությունն ընդլայնելու նպատակով:

Ակնկալվող արդյունքներ:

1. Ամրապնդված առողջապահական աշխատուժի կարողություններ ու դիմակայունություն՝ ապահովելու որակյալ առողջապահական ծառայությունների արդյունավետ և շարունակական մատուցումը:
2. Ամրապնդված հոգեկան առողջության համակարգեր, ներառյալ կառավարման մեխանիզմներ, ինստիտուցիոնալ կարողություններ ու մասնագիտական հմտություններ՝ հոգեկան առողջության խնդիրների կանխարգելման և կառավարման ոլորտում: